



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 13 ՄԱՅԻՍ, 2019

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐԹ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՄԱՂՄՈՍ 14

### ՄԱՐԴՈՑ ԶԱՐՈՒԹԻԻՆԸ

Ամիս մարդիկ իրենց մտքին մէջ ըսին. «Աստուած չկայ», ուստի ապականեցան եւ զգուելի արարքներու մէջ ինկան. չկայ մէկը որ բարին գործէ: Տէրը երկինքէն կը նայի մարդոց, րեսնելու համար թէ կա՛յ արդեօք իմաստուն մարդ մը, որ Աստուծոյ կը դառնայ: Ամէնքն ալ խտրորեցան եւ մոլութեանց գիրկը ինկան. չկայ մէկը որ բարին գործէ, չկայ մէկը, ոչ իսկ մէկը: Երբեք խելքի պիտի չգա՛ն բոլոր անոնք, որոնք չարիք կը գործեն. անոնք՝ որոնք իմ ժողովուրդս կ'ուրեն, հացի պէս, եւ Տիրոջ չեն աղօթեր: Բայց յանկարծակի՝ Տէրը զիրենք ահ ու դողի պիտի մատնէ, որովհետեւ Աստուած արդար մարդոց հետ է: Չարագործները աղքատին խորհուրդները կը հեգնեն, բայց Տէրը ինքն է անոր ապաւենը: Ոհ, րեսնէի Աստուծոյ ժողովուրդին փրկութիւնը, որ Միոնէն պիտի գայ: Երբ Տէրը ետ դարձնէ գերի րարուած իր ժողովուրդը, Յակոբի սերունդները պիտի ցնձան եւ ուրախանան:

### ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈՐԹ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:*

*Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:*

*Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:*

*Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:*

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հոովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

## ՕՐՈՒԲԱՆ ՆԻԻԹԸ



### ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄԻՆ ԵՐԵՄԻԱՅԻ

5:12-31

#### **ՏԵՐԸ ԻՍՐԱՅԷԼԸ ԿԸ ՄԵՐԺԷ (5:12-19)**

Բաւարար չէ, որ անոնք մեղքի ու անօրէնութեան մէջ են, քակաւին, մարգարէին ազդարարութեան դիմաց Տէրը կ'ուրանան ու կ'ըսեն, «**մեր վրայ չարիք պիտի չգայ, սուր ու սով պիտի չլինեն**» (12 հմր):

Ահա այս ձեր վերաբերմունքին դիմաց, Տիրոջ խօսքերը մարգարէին բերնին մէջ իբրեւ կրակ, իսկ ժողովուրդը որպէս փայտ, որպէսզի այդ կրակը լափէ այդ փայտը, որ զանոնք սպառէ (14 հմր): Մարգարէական այդ պարզամտները պիտի իրականանան եւ անակնկալի պիտի գան երբ այդ բոլորը կ'արարուին: Ահա հեռուէն պիտի գայ թշնամին գորաւոր ու հին ազգ է, որուն լեզուն անձանօթ է ու չես հասկնար (15 հմր): Ակնարկութիւնը Քաղղեացիներուն մասին է Նաբուգոդոնոսոր թագաւորը Ասորեստանի: 16-17 հմրները կը ներկայացնեն այդ թշնամիին ուժը, վայրագութիւնը, ահաւորութիւնը, որ ոչ մէկ յոյսի նշան: Այս նոյն մարգարէութիւնը մարգարէացաւ Մովսէս Բ Օրինաց 28:49-51:

Այս բոլոր եղածներուն հետ մէկտեղ, Տէրը դարձեալ ցոյց կու տայ յոյսի նշոյլ մը, «**Ձեզ պիտի չհարցնեմ**» (18 հմր): Աւարտը չէ:

Ինչպէս միշտ, մարդկային նկարագրին յարուկ մէկ երեւոյթն է սա. «**Ի՞նչ պարճառով մեր Տէրը Աստուածը այս բոլոր բաները ըրաւ մեզի**», եթէ այսպիսի բան մը հարցնեն, անոնց պատասխանէ ըսելով. «**Ինչպէս դուք զիս թողուցիք ու ձեր երկրին մէջ օտար աստուածներու ծառայութիւն ըրիք, այնպէս ալ դուք ձերը չեղած երկրին մէջ օտարներու ծառայութիւն պիտի ընէք**» (19 հմր): Տէրը քանի-քանի անգամներ ազդարարեց, զգուշացուց որ հաւաքարիմ ըլլան Իր փրում խոստումին: Քեզի փրուեցաւ երկիր մը, որպէսզի վայելէիր, ուրիշ բան չունէիր ընելիք, եթէ ոչ միայն շնորհակալութեամբ Աստուծոյ հնազանդելու, եւ ահա այդ բոլորի փոխարէն քու ձեռագործդ եղող աստուածներ շինեցիր ու անոնց երկրպագութիւն ըրիր եւ մոռցար ու հեռացար ճշմարիտ Աստուծմէ: Ահա հասած է պահը, որ դուն օտար երկիր երթաս եւ օտար փիրոջ ծառայութիւն ընես:

#### **ԱՍՏՈՒԱԾ ԻՐ ԺՈՂՈՎՈՒԲՐԸ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԷ (5:20-31)**

Յայտարարէ, պարմէ, թող որ ժողովուրդը լսէ, իմանայ (20 հմր), որովհետեւ այս ժողովուրդը «**յիմար ու անմիտ է, որ աչքեր ունիք, բայց չէք տեսներ. ականջներ ունիք, բայց չէք լսեր**» (21 հմր): Այնպէս ինչպէս իրենց պաշտած արձաններն են՝ որոնք ոչ կը տեսնեն եւ ոչ ալ կը լսեն: Նոյն յայտարարութիւնը որ Եսայի մարգարէն կը յայտարարէր, որուն համար ալ Քրիստոս աշխարհ գալով պիտի բժշկէր կոյրն ու խուլը, որպէսզի կարենային տեսնել ու լսել: Տեսնելու Աստուծոյ մեծամեծ գործերը, եւ լսելու Աստուծոյ խօսքերն ու պարտաւորումները:

«**Ինծմէ պիտի չվախնա՞ք, իմ երեսէս պիտի չդողա՞ք**» (22 հմր): Վախնալ եւ դողալ ոչ սարսափելու իմաստով, այլ՝ չարէն հեռու մնալու, եւ Աստուծոյ պարտաւորումները կատարելու: Առաւել եւս, ի մտի ունենալու Աստուծոյ արարչագործութիւնն ու Անոր նախախնամութիւնը: Նոյն այս պարզամտ կը յիշեցնէ Քրիստոսի հրաշագործութիւնը երբ հանդարտեցուց ալիքները, որուն հնազանդեցան, եւ աշակերտները զարմանքով հարցուցին թէ ով է այս որուն կը հնազանդին հովն ու փոթորիկը, ծովն ու ալիքները (հմմտ Սպաթ 8:27): Ահա ամբողջ բնութիւնը Աստուծոյ կը հնազանդի, իսկ մարդ արարածը, որուն փրուեցաւ բանականութիւնը, փարբեր միւս բոլոր արարածներէն, ազատ կամեցողութեամբ, բայց ահա արդէն անհնազանդ ու ապստամբ սիրտ ունի, եւ անոնք իրենց ճամբան ծռեցին, որ կը նշանակէ շեղեցան Աստուծոյ գծած ճշմարիտ ճանապարհէն (23 հմր):

Ահա իրենց անօրէնութեան ու մեղքի պարճառով, այն բոլոր բարիքները որոնք կը վայելէին Աստուծոյ նախախնամութեամբ հեռացան իրենցմէ (25 հմր): 26-27 հմր համեմատութիւն մը կ'ընէ ըսելով. «**Անոնք որսորդներու պէս որոգայթ կը լարեն, մարդիկ կը բռնեն: Ինչպէս վանդակը թռչուններով լեցուն են, անոնց փունները նենգութեամբ լեցուն են**»: Որսորդը ամէն տեսակի նենգութեամբ, խորամանկութեամբ կը փորձէ իր որսը որսալ, նոյնպէս ալ Իմ ժողովուրդս, կ'ըսէ Տէրը, նենգութեամբ եւ խորամանկութեամբ կ'ուզէ իր փունը լեցնել հարստութեամբ: Անոնք հարստացան, պարարտացան, մանաւանդ «**չարերուն գործերն ալ գերազանցեցին, բայց անոնք արդար դատաստան չեն ըներ, որքին իրաւունքը չեն պաշտպաներ, թէւ անոնք յաջողութիւն կը գտնեն, աղքատին դատը չեն տեսներ**»

(28 հմբ): Բայց անոնք կոչում մը ունէին նմանելու Աստուծոյ, ինչպէս Աստուած կ'ողորմի, արդար դարաստան կը տեսնէ, նոյնպէս ալ անոնք նոյնը պէտք էր ընէին, բայց հակառակը, անոնք շար աւելի ամբարշտութեամբ ու նենգութեամբ լեցուցին իրենց կեանքը: Ու հիմա, ինչ կը սպասուի իրենց եթէ ոչ պարիժ ու վրէժ (29 հմբ): Փոխանակ մարգարէներն ու քահանաները դաստիարակելու ժողովուրդը եւ Աստուծոյ ճամբան սորվեցնելու, ընդհակառակը, անոնք սուր մարգարէութիւններ կը փոխանցէին, ու մանաւանդ այնպիսի բաներ կը սորվեցնէին, որով ժողովուրդը անով կ'ախորժէր: Ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ իր աշակերտին՝ Տիմոթէոսին. **«Վերջին ժամանակներուն մարդիկ այնպիսի քարոզիչներ պիտի փնտռեն, որ զիրենք կը հաճոյացնեն»** (Բ Տիմ 4:4): Բայց զգոյշ, ինչ պիտի ընէք, երբ անոնց վախճանը հասնի, կ'ըսէ Տէրը: